


Ապագա Հանդես

APAGA
Quarterly

Հայ-իրանական մշակութային և հասարակական եռամսյա հանդես
An International Journal of Oriental Studies



ISSN 1682-5438

Համար 58 սեպտեմբեր , 2014 թ.

No. 58, , September 2014

ԱՊԱԳԱ No. Համար 58 (73) 2014 APAGA

Հայ-իրանական մշակութային եւ հասարակական միջազգային եռամսյա հանդես
An international Quarterly Journal of Oriental studies

Արտոնատեր, Հրատարակիչ եւ Գլխավոր խմբագիր
License-holder, Publisher & Editor-in-Chief

Էդ. Բաղդասարյան / Ed. Baghdasarian, PhD.

Փոստարկղ համար 15875-9488 Թեհրան-Իրան
POBOX No. 15875-9488 Tehran – Iran

WEB: www.apagaonline.com and www.apagamonthly.4t.com
E-mail: apaga98@hotmail.com ISSN 1682-5438

Քովանդակություն

Հայերեն Կովկասյան Հայաստանը կայսերական եվ խորհրդային կառավարման միջեվ Ազգային անկախության նախերգանք

Անգլերեն Մուսասիր

Պարսկերեն Աղվանքի աշխարհագրությունը

CONTENTS

Armenian Caucasian Armenia in the time of Tsarist and Soviet Russia, on the road to independence

English The Grate Musasir Temple of Armenia

Persian Geography of Aran

- Հոդվածների հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել խմբագրության տեսակետներին:
- Արտատպության դեպքում հղումը «Ապագա»-ին պարտադիր է:
- Ստացված հոդվածները չեն գրախոսվում և չեն վերադարձվում:

Subscriptions: \$ 20 per year

Գինը 5000 ռիալ

Կովկասյան Հայաստանը կայսերական եվ խորհրդային կառավարման միջեվ Ազգային անկախության նախերգանք

Առաջաբան

Մույն քարգնանությունը ներկայացնում է 1980 թ. ապրիլի 24-25-ին Վաշինգտոնում կայացած Քենանի ինստիտուտի «Անդրկովկաս. ազգայնա-կանությունը և սոցիալական փոփոխությունը» գիտաժողովում ներկայացրած պրոֆ.Ռ.Հովհաննիսյանի «Կովկասյան Հայաստանը կայսերական և խորհրդային իշխանության միջև. ազգային անկախության նախերգանք» վերնագրով զեկուցումը: Հեղինակը Ամերիկյան հայկական համագումարի և հայագիտության ընկերության հիմնադիրներից է, և ներկայացնում է Կալիֆոռնիայի նահանգը Արևմտյան միջնահանգային բարձրագույն կրթության հանձնաժողովում: Նա գիտական ու հասարակական կազմակերպությունների տնօրենների խորհրդի անդամ է: Հազարից ավելի հարցազրույց ու զեկուցում է անցկացրել համալսարաններում, համայնքի ժողովներում, ռադիոյի և հեռուստատեսության միջոցով, որոնք մեծ մասամբ նվիրված են հայ ժողովրդի պատմությանը, ցեղասպանությանը, ու հայագիտության այլ հարցերին:

Խարբերողի ծնողների զավակ, 1932-ին ծնված, մեծացել, կրթվել և օջախ է ստեղծել Կալիֆոռնիա նահանգում, որտեղ Հովհաննիսյան-գիտնականի գրչի տակից դուրս են եկել «Հայաստանը անկախության ճանապարհին», «Հայաստանի Հանրապետություն», «Հայերի ողջակիզում», «Հայոց պատկերը պատմության ու գրականության մեջ», «Հայերի ցեղասպանությունը հեռանկարում» աշխատությունները, ինչպես նաև ավելի քան 30 հոդված:

Այժմ Ռիչարդ Հովհաննիսյանը հայոց և Մերձավոր Արևելքի պատմության պրոֆեսոր է Լոս Անջելեսի Կալիֆոռնիայի համալսարանում (ԼԱԿՀ), ֆոն Գոյունեբաումի անվան Մերձավոր Արևելքի ուսումնասիրությունների կենտրոնի պաշտոնակից տնօրեն: Գասավանդում է հայոց պատմություն ԼԱԿՀ-ի բարձր կուրսեցիներին և ասպիրանտներին:

Պրոֆ.Ռ.Հովհաննիսյանը համառորեն պայքարում է միջազգային հասարակության կողմից հայերի ցեղասպանության ճանաչման համար: Նա «Դեմ հանդիման պատմությանը և մեզ» կազմակերպության, Բնաջնջման և ցեղասպանության միջազգային ինստիտուտի, Միջազգային աչալրջության ու Հայկական ճարտարապետության հետազոտման կազմակերպության տնօրեն-

ների խորհուրդների անդամ է, «Արմինիեն Ռեվյու», «Արարատ», «Ջորնել ռֆ զե Մոսայեթի ֆոր Արմինիեն Սթադիզ» ամսագրերի խմբագրական հանձնախմբերի անդամ:

Վաստակաշատ գիտնականը այս տարի ընտրվեց Հայաստանի Գի- տությունների Ակադեմիայի իսկական անդամ: Մեծ գիտնականը ու հայրե- նանվեր հայը շարունակում է իր եռանդուն ազգասիրական գործունեությունը թե՛ Միացյալ Նահանգներում, թե՛ հայրենիքում:

1917 թ. հեղափոխության հոսանքով կենտրոնական Ռուսաստանից կտրված Անդրկովկասը 1918 թ. մասնատվեց երեք ազգային հանրապե- տության: Անկախ պետություններ ստեղծելու վրացիների, ադրբեջանցիների և հայերի փորձերը, վերջի վերջո ձախողվեցին, ու 1921 թ. կեսերին ամբողջ տարածքը ներքաշվեց խորհրդային համակարգի մեջ: Այնուհանդերձ, հենց այս անկատար, անցումային պետությունների հիմնադրման շնորհիվ էր, որ ստեղծվեցին Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի խորհրդային հանրապե- տությունները: Դաշնակցային պետական կառուցվածքի սկզբունք ընդունելու Ռուսաստանի կոմունիստական կուսակցության խոտորումը մասամբ թելա- դրովում էր ազգայնական կուսակցությունների ազդեցությանը ընդդիմանալու և քայքայվող պետության նահանգներում ազգային զգացումներն իր կողմը գրավելու անհրաժեշտությամբ: Հայերի համար իրենց անկախ հանրապե- տությունը խորհրդային ազգային հանրապետության վերափոխելը մնում է հատկապես կարևոր, նկատի առնելով այն, որ պատմական հայկական տարածքների սուկ մի փոքր մասում 1920 թ. ի վեր շարունակվում էր ազգային կյանքը և անգամ ֆիզիկական ազգային գոյատևումը:

Թեև Անդրկովկասի երեք անկախ պետությունները շատ ընդհանուր գծեր ունեին, Հայկական Հանրապետությունը կարելի է առանձնացնել նրա համար չափազանց անբարենպաստ իրավիճակի և նրա զուգորդման պատճառով՝ աշխարհագրորեն ու քաղաքականորեն ավելի լայն, Հայկական հարցին, որը չորս տասնամյակների ընթացքում վեճեր էր հարուցում միջազգային դիվա- նագիտության մեջ: Մինչդեռ, օրինակ, Վրաստանն ու Ադրբեջանը ենթա- դրաբար կարող էին դառնալ կենսունակ անկախ հանրապետություններ՝ այն սահմանափակ տարածքներով, որոնք նրանց իրական վերահսկողության տակ էին գտնվում 1919 թ., դեպի ծով ելք չունեցող փոքրիկ հայկական պետության համար նման հաշվաբքը հնարավոր չէր: Առավել քան անվանական անկա- խություն ձեռք բերելու համար այդ հանրապետությունը պետք է իր մեջ ներառներ Թուրքահայաստանի նահանգներն ու դեպի ծով ելք չափեր:

Կովկասում ռուսական հարյուրամյա կառավարման ընթացքում հայ- կական տարրը կտրուկ աճեց, Թիֆլիսում ու մյուս

քաղաքներում սկսեցին գերակշռել հայ մտավորական և արհեստավորական-առևտրական խավերը, իսկ հայ գյուղական բնակչությունը շատ շրջաններում ազատվեց խոշոր հողա- տերերի՝ մահմեդական բեկերի և աղաների, տնտեսական ստրկացումից: Սակայն հայերի աշխարհագրական տարաբնակեցումն այդպիսին էր, որ Անդրկովկասի ցանկացած անաչառ բաժանման դեպքում նրանց գրեթե բոլոր առևտրական և ֆինանսական կենտրոնները, ինչպես և հայ ժողովրդի մի քանի հարյուր հազար զավակներ, իսկ գուցե և մեծ մասը, կհայտնվեին Հայաստանի սահմաններից դուրս: Յարական իշխանության ներքո Ռուսաստանի նա- հանգները մնացին թերզարգացած, և Թիֆլիսի հայկական ֆինանսական, մտավորական, մշակութային ու քաղաքական բուռն կյանքի ստվեր անգամ չկար Երևանում՝ 1914 թ. 30 հազար բնակիչ ունեցող այդ կիսաքուն արևելյան ավանում, որին դժվարությամբ կարելի էր համեմատել ավելի քան երեք հարյուր հազարանոց Թիֆլիսի կամ մեծ քաղաք Բաքվի հետ:

Այս գործոնները օգնում են բացահայտելու հայ առաջնորդների, նույնիսկ առավել ազդեցիկ դաշնակցության կուսակցության ղեկավարների ծայրահեղ դժկամությունը՝ 1918 թ. Երևանի շուրջ անկախ պետություն ստեղծելու առթիվ: Նման պետության ստեղծումը ոչ 19-րդ դարի ազգային-մշակութային աշ- խուժացման տրամաբանական հետևանքն էր, ոչ էլ նախորդ 30 տարիների հեղափոխական շարժումների արդյունք: Դիմադրության շարժումը կենտրո- նացվել էր Թուրքահայաստանի (կամ Արևմտահայաստանի) բնակչության ազատագրման ու Թուրքահայաստանի նահանգներում տեղական ինքնակա- ռավարում, կամ հնարավոր տարածքային ինքնավարություն մտցնելու վրա: Ինչ վերաբերում է Ռուսահայաստանի նահանգներին, ապա հայ մտավոր ու հասարակական առաջնորդների գերակշիռ մասը մտածում էր լոկ ազատախոհ այն բարեփոխումներն անցկացնելու մասին, որոնք Ալեքսանդր II ցարի կա- ռավարման օրոք հայտարարվել, բայց Կովկասի վրա չեն տարածվել:

Անկախության հնարավորությունն ընձեռնվեց ամենաանբարենպաստ հնա- րավոր պատմական պահին, որը, թվում էր, բոլորովին բարեպատեհ չէր: Օսմանյան կայսրության հայ բնակչությունը ոչնչացվել էր երիտթուրքական իշխանությունների գործողությունների հետևանքով, հայկական քաղաքական, մշակութային ու կրոնական ընդարձակ ցանցը ավերվել էր և մի քանի հարյուր հազար հայ գաղթականներ ուժասպառ էին լինում արաբական նահանգ- ներում, Կովկասում ու Հարավային Ռուսաստանում: Ազատագրական շար- ժման բուն հիմքերը խորպես, գուցե և անդառնալիորեն խարխրվել էին: Ու թեև ռուսահայերը վերելք էին ապրում համաշխարհային պատերազմի առաջին տարիներին ցարական կառավարության հովանավորական

վերաբերմունքից, շուտով կորցրեցին պատրանքները 1916 թ. նոր պատժիչ միջոցառումներից, անցկացված այն բանից հետո, երբ կայսերական բանակները գրավեցին դաշնակիցների գաղտնի պայմանագրով Ռուսաստանին շնորհված Թուրքահա- յաստանի կեսը: Թուրքահայաստանից գաղթածներին խոչընդոտում էին վերադառնալ նվաճված տարածքներ, ու թվում է, թե Նիկոլայ II ցարը սրտին մոտ էր ընդունել «Հայաստանն առանց հայրեի» կարգախոսը, որը վերագրվում արտաքին գործոց նախկին վարչապետ Լորանով-Ռոստովսկուն: 1917 թ. ժա- մանակավոր կառավարության ստեղծումը կարճատև դադար ընձեռեց, ու հա- զարավոր գաղթականներ իրոք վերադարձան Էրզրում, Վան ու Բիթլիս, սա- կայն այդ շարժումն ուղեկցվում էր ռուսական բանակներում պարտվողա- կանության ու դասալքության ծավալմամբ, դրանով իսկ տարվա վերջերին մղձավանջի վերածելով հայոց բաղձանքը:

Հրաժարվելով բոլշևիկյան հեղափոխության կողմն անցնելուց կամ ժո- դովրդական կոմիսարների խորհրդի օրինականությունը ճանաչելուց, Կովկասի գլխավոր քաղաքական կառույցները, բացառությամբ Բաքվի, կազմակերպե- ցին ժամանակավոր գործադիր կառավարման և օրենսդիր մարմին, որպեսզի տեղական գործերը կարգավորեն ընդհուպ մինչև Ռուսաստանում, այսպես կոչված, ժողովրդավարական կարգեր հաստատվելը: Այս միջոցառումներն, ա- յնուամենայնիվ, բոլշևիկյան ժողկոմխորհին հետ չպահեցին ճանաչելուց որ- պես Բրեստ-Լիտովսկի պայմանագրի մի մաս` օսմանյան կայսրության իրա- վունքը Թուրքահայաստանի վերանվանման և Անդրկովկասի Կարս, Արդահան ու Բաթում մարզերի բռնակցման վերաբերյալ: Չօգնեցին նաև ընդարձակ ռազմաճակատում դիրքեր զբաղեցնելու հայ և վրացական հապշտապ կազ- մավորված զորամասերի փորձերը, որպեսզի խանգարեն թուրքական առաջ- խաղացումը նշված ձեռքբերումներն ապահովելու համար: 1918 թ. մայիսին թուրքական ռազմական ուժերը նույնիսկ ճեղքեցին Բրեստ-Լիտովսկի սահ- մանները և անցան Թիֆլիսի նահանգի հարավ-արևմտյան շրջան և Երևանի նահանգի Արաքս գետի հովիտը: Հենց այդ պահին վրացիներն իրենց ձեռքը վերցրին Անդրկովկասի դաշնակցային կառավարությունը ցրելու նախաձեռ- նությունը ու հռչակեցին պատմական տարածքների անկախությունը` գերմա- նական հովանավորության ներքո: Մահմեդական պարագլուխները հետևեցին նրանց` հռչակելով Ադրբեջանի Հանրապետության ստեղծումն ու ստանալով թուրքական առատաձեռն օգնությունն ու ռազմական աջակցությունը Բաքվից հայ-ռուսական դաշնակցությունը դուրս մղելու ընթացքին:

Ահա այս հանգամանքներում էր, որ Թիֆլիսի հայ ազգային խորհուրդը պետք է դեմ-հանդիման կանգներ հայկական անկախություն հռչակելու հե- ռանկարին ու Հայաստանի Հանրապետության անունից հաշտության ջախ- ջախիչ

պայճանագիր ընդունելուն: Նոր հանրապետությունը պետք է ուրանար ինչպես Թուրքահայաստանի նահանգների, այնպես էլ Ռուսահայաստանի Կարսի և Արդահանի նկատմամբ բոլոր պահանջները, թույլատրելով Արաքս գետի ողջ հովտի՝ ներառյալ Ալեքսանդրապոլ-Չուլֆա երկաթգիծը, թուրքական նվաճումն ու հնարավոր բռնակցումն ու շնորհելով թուրքական բանակներին տարանցիկ և այլ արտոնություններ: ...

THE GREAT MUSASIR TEMPLE OF ARMENIA

By Mark A. Kalustian



The Temple in Musasir from Botta, P.E. Monuments de Nineve. volumes, Paris, 1849-1850, elephantine folio; with illustrative line drawings by Eugene Flandin.



www.ArmenianHistoryLand.com

Sargon II

IN 1843, an archeological team under the leadership of Paul-Emile Botta and sponsored by the French government, excavated a large mound in **Khorsabad** about fifteen miles northeast of Nineveh. At this site, the first of the Assyrian palaces was to be discovered covering an entire city within walls a mile long. A monumental palace was built by **Sargon II, who ruled from 721 to 705 BC**, on a scale never till then attempted by an Assyrian monarch. This structure was created with utmost care and splendor and was called **Dur Sharrukin or "Sargon's Fortress"**. The results of Botta's excavations were published in a sumptuous edition! with ample funds provided by the French government and now an expensive rarity.

During the early 1850's, the British Assyrian Excavation Fund entered the field under William Kennett Loftus and many antiquities and accurate drawings of wall sculptures were apportioned between the British Museum and the Louvre. However, a bas-relief destined for Paris forming part of an ill-started convoy of antiquities was attacked by Arab robbers while being shipped down the Tigris River, and today lies buried somewhere in the bed of that river. Fortunately that particular bas-relief was copied at its original location in the palace onto a drawing by Eugene Flandin(2) as Botta's chief artist.

During this period of Assyrian campaigns, the northern Araratian regions were governed by Sardour -and later by his son **Rusa (Hrachya, according to Movses Khorenatsi)** with the capital at Tushpa (Tosp) located near the great city and the capital of the mighty Kingdom of Ararat, Van (Biaina) on the eastern shore of Lake Van. Sardour placed Urzana as the governor of the spiritual center of Ararat, Musasir.

Դիւ Լոււօրէ Թէքստ օն Լատէ Արարատիան Իստորի անձ տիւ
Դրասուրէս օփ Մուսասիր

We gather from the Louvre texts that in the summer of 714 BC, Sargon with a great army crossed the Kurdish mountains towards Lake Urmia, swept through the Araratian cities in the area and then turned westward into the land of Nairi, south of Lake Van. For good reason (knowing that many of his Assyrian predecessors were thrown back from the gates of Van), Sargon by-passed Tushpa and marched around the northern and western reaches of the lake and stealthily attacked Musasir, throwing the entire countryside into panic and confusion. King Urzana and his retinue fled into the mountains, leaving the victorious Assyrians to overrun the city and capture the palace of the ruler with its store-rooms filled with immense treasure. He then entered the temple of the god Haldi (Khaldi) where even greater beauty was found. **The list of valuables has been catalogued in the Louvre text(3) and it defies imagination and comprehension. It is sufficient to state that King Rusa had assembled the greater part of the treasures of Ararat (Urartu) in Musasir for safe-keeping under the care of his hand-picked ruler Urzana, to thwart the greedy appetite of the mighty Assyrian king. Indeed, the treasures of the Egyptian Tutankhamen discovered in the 1920's pales into insignificance when compared with the fantastic wealth that Sargon carried back to Assyria to record in text and bas-relief in the capital of Assur and the palace at Dur-Sharrukin.** Fortunately, the boastful inscriptions and wall paintings of the military monarch have preserved for us **the nature of the**

high culture of Ararat, which otherwise would have never seen the light of day. It has been stated that when Hrousha (Rusa) learned of the destruction and pillaging of Musasir and the abduction of his god Haldi, committed suicide.



A Detail From a Relief Portraying the Royal Procession of King Hrousha (Rusa)


Μυσασίρ – Της Προτοτύπης φέρη Χλασσιγαλ Γρεεκ Τεμπλεσ

And now, in the year 1986 or 2,700 years later, the author of this article has the audacity to claim that Musasir deserves the attention of the architectural world for no other reason than the preservation of the drawing of the temple by Flandin which accompanies the dissertation. Please look at the drawing and follow my line of reasoning. Here we see the oldest of the temples Ararat which, according to reliable sources, was built around 825 BC in the city of Musasir, which can be located with some certainty in the area between lakes Van and Urmia, in **Historic Armenia**.(4)

It depicts the pillaging of this temple erected to the warrior God Haldi by the soldiers of Sargon's army, but our concern at this moment is not in robbery but in artistry. Notice the pitched or gabled roof of either wood or stone, **the vertical triangular end from eaves to ridge of roof with a high pediment. The portico or facade has six columns or piers or pilasters, if you will. The effect is definitely like a Greek temple similar to the Partheonon in Athens with which everyone is familiar. That Greek edifice was built around the year 500 BC or 425 years later than the Armenian temple of our Araratian forefathers.** Up till now, no monument has been found in Mesopotamia similar to the Musasir temple except in Asia Minor. In Phrygia, during the 8th to the 5th centuries, great facades were carved on rock-cut faces representing temples for the cult of the Great Mother. These too became the prototypes for the classical Greek temples.

However one approaches this problem, what the Musasir monument does show is the affinity of Armenian architecture in the ninth century BC, with the architecture of Asia Minor and of Greece - an important fact, since Armenia at a later date was under Mesopotamian influence. This fact was attested to by K. J.

Basmadjian's(5) the editor of *Panaser* and a member of the *Societe Asiatique* in 1903. In writing to the Society he says, "My strongest argument is the similarity of the pediment of both the Parthenon and that of the temple of Musasir. In both cases exactly the same triangle is preserved. The oldest monument in the world having this triangular pediment is the temple of Musasir. Neither Assyria nor Babylonia, the two great powers which have always been in touch with the Araratians, have ever had this triangular form. From Armenia it was evidently transmitted to Phrygia and Lydia, and through these countries it was introduced to Athens, and afterwards back to Persia... the temple was probably constructed during the reign of Ishpuhini (828-784 BC), king of Ararat (Urartu) , for this was the first king who marched upon Musasir and conquered it "(6). If further proof is needed that the temple is not an isolated instance in point, then let us glance to the other bas-relief which is plate number 114 in Volume II of Botta's monumental work. Here we also see for the first time anywhere, the Armenian kiosk or "pleasurehouse" on the margin of a lake. Notice the columns or pillars strongly resembling those of the Ionic order in Greek architecture.



Armenian kiosk or "pleasurehouse" on the margin of a lake from Botta, P.E. *Monuments de Nineve*. 5 volumes, Paris, 1849-1850, elephantine folio; with illustrative line drawings by Eugene Flandin.

ΞΞ τη Χεντυρψ Εξγαπατιονσ

Since 1959, the Historical Society and the Department of Antiquities have conducted excavations in the Yerznka area, west of Karin. Here at Altintepe was revealed an Araratian temple and other monuments.(7) It is significant to point out that although only the foundations of the temple are in view, this shrine to the god

Haldi (Khaldi), located in the Ararat confederation of Haiasa, the heartland of Hai forefathers, contained many treasures very much alike those described by the bas-reliefs of the Assyrian king Sargon II.

ՆՈՒՏԵՍ ԱՆԾ ԲԵՓԵՐԵՆՎՅԵՏ

1. Botta, P.E. Monuments de Nineve. 5 volumes, Paris, 1849-1850, elephantine folio; with illustrative line drawings by Eugene Flandin.
2. See plate number 141 in Volume 11 above or illustration accompanying this essay.
3. Thureau-Dangin, F. Une Relation de la Huitieme Campagne de Sargon. Paris, 1912, page 65.
4. Belck, W. Zeitschrift fur Ethnographie. Berlin, 1899, p. 103.
5. Basmadjian was a noted editor and writer of literary and scientific articles relating to Armenia; residing in Paris. 6. Journal of the Royal Geographic Society for 1905, pages 362-363.
6. Archaeology. October 1969, Vol. 22, No. 4; Urartu and Altintepe, by Tahsin Ozguc, pp. 256-263, with 10 illustrations.
7. The Armenian Review. June 1980, pp. 214-215 with illustration. An Armenian Cylinder, by Mark A. Kalustian.
8. Babelon, Ernest. Manual of Oriental Antiquities. New York, 1889, pp. 76-77, with illustrations.
9. Piotrovskii, B.B. Urartu: The Kingdom of Van and Its Arts. New York 1967, pp. 6-11, with illustration.
10. Olmstead, Albert T. Western Asia in the Days of Sargon, Assyria. Lancaster, PA, 1908, vii + 193 pp., Chapter V: The Armenian Wars, pp. 103-116.
11. Olmstead, A.T. History of Assyria. New York, 1923 xxix+695 pp., figures 101, 102, 115 and 116. The title under fig. 101 reads: Plunder of the "Greek" temple of Musasir!